ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի օգոստոսի 6-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝
ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ ***Գ. Գաբրիելյանի***
Կ.Գրիգորյանի
Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար ***Ա.Հովհաննիսյանի***

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. ***ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:***

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում գործող և կառուցվող գազալցակայանների շինարարության և գործունեության ոլորտում օրինականության պահպանման վիճակի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն ունենալու անհրաժեշտության վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝

ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում գործող և կառուցվող գազալցակայանների շինարարության և գործունեության ոլորտում օրինականության պահպանման վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն ունենալու նպատակով ակտիվացնել համագործակցությունը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան աշխատակիցների հետ և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝տարվա ընթացքում/

Հարց 2. ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ / օժանդակ / դպրոց>> ՊՈԱԿ-ի սեփականության իրավունքի վկայականի ձեռքբերման խնդրի լուծման վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին,ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին և քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝ հետևողական աշխատանքներ տանել ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ / օժանդակ / դպրոց>> ՊՈԱԿ-ի սեփականության իրավունքի վկայականի ձեռքբերման խնդրի լուծման ուղղությամբ և արդյունքների մասին զեկուցել մարզպետին:

/Ժամկետ՝ մեկ ամիս/

Հարց 3. ՀՀ Արմավիրի մարզի համայնքային և միջհամայնքային ճանապարհների վերամշակված ասֆալտի ձեռքբերման և օգտագործման խնդրի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Ա.Բիչախչյանին՝ խնդրի լուծման նպատակով մարզի համայնքների ղեկավարներին ուղղված ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան շրջաբերական գրություն նախապատրաստել և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմում 2016-2018 թվականների ընթացքում իրականացված գնումների գործընթացն ուսումնասիրելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ. Գրիգորյանին և ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Ա.Բիչախչյանին ՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմում 2016-2018 թվականների ընթացքում իրականացված գնումների գործընթացն ուսումնասիրելու նպատակով

նախապատրաստել աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ կարգադրության նախագիծ և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքային համայնքների ենթակայության կազմակերպություններին ամրացված չօգտագործվող, ազատ տարածքների վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին՝ հետևողական աշխատանքներ տանել և ապահովել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաքային համայնքների ենթակայության կազմակերպություններին ամրացված չօգտագործվող, ազատ տարածքների վերաբերյալ տեղեկատվությունը չներկայացրած քաղաքային համայնքների կողմից մարզպետարան ներկայացնելու նպատակով:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատման ներկայացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա.Հովհաննիսյանին և իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ.Հարությունյանին՝մշակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝պետա-իրավական փորձաքննության համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 7. ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմերը թարմացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին՝ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների առկա կազմերը և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին,սահմանված կարգով համապատասխան թարմացումներ կատարելու նպատակով:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 8. ՀՀ Արմավիրի մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝ քննարկման նպատակով պատրաստել համապատասխան տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 9. ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում կատարվող ապօրինի շինարարությունների նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ա.Հովհաննիսյանին՝

ա/*ակտիվացնելով համագործակցությունը քաղաքաշինության պետական տեսչության Արմավիրի տարածքային բաժնի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ, պատշաճ հսկողություն իրականացնել ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում կատարվող ապօրինի շինարարությունների նկատմամբ և արդյունքները պարբերաբար ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:*

բ/*Նշված խնդրի արդյունավետ լուծման նպատակով համապատասխան բովանդակությամբ շրջաբերական գրություններ պատրաստել և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:*
/Ժամկետ՝ 13.08.2018թ./

Հարց 10. ՀՀ Արմավիրի մարզի հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց հարկային պարտավորությունների կատարման, ինչպես նաև՝ վարձակալության տրամադրված հողի վարձակալական վճարի խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի վերանայման վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին՝ հետևողական աշխատանքներ տանել ՝ ՀՀ Արմավիրի մարզի հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց հարկային պարտավորությունների կատարման, ինչպես նաև՝ վարձակալության տրամադրված հողի վարձակալական վճարի խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի վերանայման ուղղությամբ և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:
/Ժամկետ՝ 15-օրյա պարբերականությամբ/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

10.08.2018

X

VERIFIED OCSP 10.08.2018 10:52:57 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝
Դ.Դավթյան